

Թիւն ունին: Այս վերջիններուն մէջ իր շինուածեանն ու կազմակերպութեանն առաջին տեղը կը գրասէ Սանցըն-Բախեր: Գարեջրոյ գործարաններն ունին իրենց պարտեզները. տէրերը գործնական մարդիկ են ինչպէս կ'ենեալ, սրբվհետեւ ժողովուրդը կու գայ իր լեցուի պնտեղ, ուր կը զրօսնու եւ միանգամայն մեծ քանակութեամբ գարեջրու կը սպասուէ:

Ըբեղ խանութներ կան այստեղ, թէ եւրոպական, թէ ռուսական եւ թէ ասիական ամէն տեսակ ապրանքներով: Բայց չմոռնամ ասել որ այստեղ քանատիկ թանգութիւն կը տիրէ, ամէնէն սուղն են քանակարաններն ու խանութները: Օրէսա այս կողմէն ալ կը գերազանցէ ռուսական մայրաքաղաքները:

Կ. ՏԻԻՐԵԱՆ



Գ Ր Ա Վ Ա Ն

Մ. ԽՈՐԵՆԱՅԵՐԸ ԸՅՑ ԴԻՍԻՊԵՆՏԱԳԵՑ Ե. ԲԱՅԵՐ

(Էրուսակո-թիւն)

Նանուներ ցանկանում բայց դժուարանում է Արշակունիների երեւալուց առաջ պատմական գէպերը յիշել. նա պատմում է Հայկի սերնդից մի քանի անձերի, բայց ոչ թագաւորների մասին, տալիս է ազգաբանական աղիւսակ, որի նկարագրական մասը վերցրած է Հայկի Բելի Հետ ունեցած պատերազմի եւ Համիրամի ու Արա Գեղիցիի վէպից: Մենք մի առ մի չենք նկատելու այն տարբերութիւնները, որ կան Անանունի Նախնական պատմութեան եւ Մովսէս Խորենացու պատմութեան դրան համապատասխանող մասի մինչեւ, այն մասի, որ իւր, Խորենացու իսկ ասելով, ամբողջովին վերցրած է Մարաբի կամ աւելի ճիշդը՝ Կեղծ-Մարաբի երկին: Վերջիշեալ կէտը իսկոյն եւեթ բացատրում է, որ Անանունի պատմութիւնը յարաբերում է Խորենացու պատմութեան մէջ մոեռած Կեղծ-Մարաբի երկին, ոչ որպէս համառօտ իմապարտութիւն մանրամասին, այլ որպէս սկզբնական, պարզ, յետագայ ընդարձակին: Միեւնոյն ժամանակ ոչ մի հիմունք կայ երկու իմապարտութիւններն էլ միեւնոյն անձին վերագրելու, եթէ միայն կանխապէս կարծիքով չենք նայում գործին եւ կամ հեղինակին խաղաբար չենք համարում: Չէ որ այժմ գիտենք, որ Անանունի Նախնական պատմութեան, այս աւելի հին իմապարտութեան մէջ փիլիսոփայ Մարաբան մի պատահական անձն է ներկայանում, որի ձեռքից անցել է Անանունին

մեզ յայտնի արձանագրութիւնը. ամենայն դէպքում, Մարաբի անունը կապուած է Անանունի մեզ հասած Նախնական պատմութեան միայն երկրորդ կիսի հետ, որովհետեւ առաջին կիսի մասին Անանունը պարզ ասում է՝ թէ ինքն է նրա կազմողը, մինչդեռ Մովսէս Խորենացու պատմութեան մէջ մոեռւած Կեղծ-Մարաբի ընդարձակ երկում Անանունի աշխատութեան երկու կէտերն էլ Մարաբին են վերագրւում: Արդ, ինչպէս կարելի է երկու իմապարտութիւնն էլ միեւնոյն անձին վերագրել, Ի՞նչ մտքով պիտի առաջնորդուէր այդ հեղինակը, որ երկրորդ ընդարձակ իմապարտութեան մէջ ոչնչացնում է ինքն իրեն, վերագրելով իւր սեպհական երկը մի ուրիշին եւ այն էլ նրան, որ ըստ առաջին իմապարտութեան, Նախնական պատմութեան մէջ չհեղինակութեան վրայ ամենաբիշ իրաւունքն ունի:

Բայց եթէ ընդհանրապէս ոչ դի կարելի է ընդունել այդ երկու իմապարտութիւնների միակ հեղինակ, ապա Խորենացուն աւելի եւս: Խորենացին գիտէր ոչ միայն Կեղծ-Մարաբի ընդարձակ պատմութիւնը, որ ամբողջովին ընդունել է, այլ եւ Անանունի սկզբնական իմապարտութիւնը: Եւ մինչդեռ նա առիթը բաց չի թողնում Կեղծ-Մարաբին գիտուն եւ իմաստուն ածականները տալու, Անանունի մասին բոլորովին յստիշ կարծիքի է, Նոյպէս՝ խօսելով Բագրատունիների՝ Նաբուքոդոնոսորի գերած Հրեաներից յառաջանալու մասին, Խորենացին աւելացնում է, թէ այս մասին մի ուրիշ կարծիք էլ կայ, իսկ այս կարծիքը, շատ լաւ յայտնի է, որ միայն Անանունի Նախնական պատմութեան մէջ է գտնում. առաջ բերենք Խորենացու խօսքերն այդ կարծիքի կողմնակիցների, այսինքն մեր Անանունի վերաբերմամբ:

“Քանզի ասելն ոմանց անհաւատի մարդոց, որում է Խորենացին Սահակ Բագրատունուն (Վ. իւ.), ըստ յօժարութեան եւ ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկայ զվագադիր ազգի լինել Բագրատունեաց: Վասն որոյ ասեմ. մի՛ այսպիսեաց յիմար բանից հաւանիր. զի եւ ոչ մի շաւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարգաւորութիւն անխարկէ. զի ի բայ բանից եւ անոճ իմն յաղագս Հայկայ եւ նմանեացն կապագէ:”

Յիշատակարանի վերջին մասն, որ Գուռ շմոտ սխալմամբ զգաթանգեղոսի արձանագրութեան տեղ էր ընդունել, ոչ Ազգաթանգեղոսի եւ ոչ Մարաբի Հետ առնչութիւն ունի, այլ պատկանում է Անանունին. բայց մեզ հասած

օրինակը խորհրդացու ազդեցութեան տակ փոփոխութիւնների է ենթարկուել եւ մինչեւ անգամ բացի ժամանակագրութիւնից, առանձին նախադասութիւններ էլ են մուծուել՝ 1:

Մենք արդեն սասցնիք, որ թագաւորների այս երկու աղիւսակներն ըստ երեւութին միմեանք համապատասխանում են: Այս արեւսակներով Հայ Արշակունի 23 թիւաւոր թագաւորում են իրենց համակապից Պարթևաց տասնեւմէկ Արշակունի եւ հինգ մեք առաջին Սասանեան կայսրների չափ. Հայ թագաւորների աղիւսակի միջի երեք տարի աւելին բացատրւում է նրանով, որ Պարթևաց աղիւսակի մէջ տխլաւ է սրբոյել, ըստի որ այդքանով կարծես, պակասացած է 5. Արշաւիրի եւ 8. Արշակի թագաւորութեան տարիքը, միշդեւ խեղաթիւրուած Անանունի այս մասում, ինչպէս պիտի տեսնենք, աւելի եւ ոչ թէ պակաս պիտի սպասենք:

Բայց համեմատելով հայ թագաւորների
այդ միեննայն աղետաւոր Մ. Խորենացու աղիտակի
հետ, կը տեսնենք, որ ըստ Անանունի թագաւ-
որութեան բոլոր տարիների գումարը 96 տա-
րով աւելի է Խորենացու ցոյց տուածին. (589
— 493 = 96), սա մի սաստիկ նշանակի տար-
բերութիւն է, որ ինչպէս Բ.Պ. Պատկանեանն
(սխ. ժ. եր. 63) էլ երէկ կարծուով, չի կարելի
բացատրել:

Եւ յիրաւի, համեմատելով Հայոց աղիւսակում միմանկ յաջորդող Մարշալութեաններին անուններով, կը տեսնենք, որ Անանտոն երկու երեք անուն աւելի է տալիս, որոնք չկան խորենացու աղիւսակի մէջ, եւ մէկ էլ ուրիշ 4 արգով է դասաւորուած: Յայտնի է, որ խորենացու Պարթեւն Մարշալութեաններին ժամանագրական տեղեկութիւնները լաւ հաստատուած են, միայն թէ թագաւորներին թիւը սահմանափակուած է, այնպէս որ երբեմն մի թագաւոր երկուսի թագաւորութեան տարիներին է բռնում: Խորենացին նոր աղբիւրներից օգտւելով՝ մեծել է իւր աղիւսակի մէջ Մարշալութեաններին երկու, հաւանաբարեւն երեք (ֆ. Պատ. Ս. դ. եր. 56) անուն, որոնք մեծ ընթանումի մէջ, բայց որոնց

Թագաւորութեան տարիները, կարծես, ծածկուած են առաջին Նըշակունու Թագաւորութեան մէջ, Եամնայի դէպք Պարթեւաց Թագաւորների աղիւսակի մէջ ոչ անսպասելի ներմուծում, որ մի որեւէ տեղագրութիւն կամ մոռացութիւն կայ: Ընդհակառակը չէլոր Թագաւորների աղիւսանները տարբերում են, որովհետեւ մայ վերջինները պէտք էր առաջին անգամ այնպէս եւ կարգէն ազգային նորոպիթիթ գրականութեան մէջ:

Այս խնդրի վերաբերմամբ տատանում եւ կարծիքի տարբերութիւն կարող էր լինել միայն սկզբներում: Մովսէս Խորենացուն յետոյ, որ այս պատմագրութեան տեսանկէտից պարզին լուծումն էր և տուէր այս հարցին, հայ պատմագիրները միայն կրկնել են հեղինակաւոր ուսուցչի ասածները: Խորենացին Պարթեւնիքի աղէկաստի մէջ մի աննշան մանրամասնութիւն է մոռնել, որ իւր հոգեծանմէն չէ վերաբերում Անանունի տառապագրութեան: Հայոց աղէկաստի մէջ բացի անունների, դասաւորութեան եւ թագաւորների թւոյ տարբերութիւնից, Խորենացին պատմել է ինչ որ չկայ կամ աւելի, ինչ ի նկատի անգամ չէ անտեսում Անանունի աշխատութեան մէջ: Գիտելով Անանունի քաններեք անձերի աղէկասկը, առաջին երկու Արշակունիներից յետոյ, որոնց արեւնագրութիւնը կարգուած է դեռ Խորենացու (Բ. Թ) աղբիւրի մէջ, մենք նկատում ենք երկու կարգի անուն: Վերջին, (Գ) ամենից նշանաւոր, Եղիսիայի թագաւոր եւ Աբգարի հայր՝ Արշամից սխառող կարգը երկու հեղինակների մօտ եւս համարենք բոլորովին նման յաջորդականութեամբ է գնում, եւ արբացատրութիւնը այնու ամենայնով ծածկում է թագաւորների շարքը դասած քրիստոնէութեան յայտնի համախոհների կամ հակառակորդների մասին կարգաւորուած աւանդութիւնների մէջ: Եւ մինչդեռ Անանունը չի պարզում թէ այս երկու կարգը միմանց յաջորդում են ի՞նչ տաճանակից են, Խորենացու աշխատութեան մէջ այս տարակուսանքին վերջ է տրուած: Խորենացին աշխատում էր միայն մի թագաւորող տոհմ դուրս բերել ամբողջ՝ բայց իսկապէս այնքան բաժանուած Հայաստանի համար՝

« . . . Թագաւորք աշխարհիս մերոյ, ասում է նա երկրորդ գիրքն սկսելիս (Բ. ա),

« . . . որդի ի հօրե աննլով զսերունդին՝
անուանեցան Արշակունիք յԱրշակայ. աւելորդքն
յազգ եւ ի բազմութիւն աճեցեալք, եւ միակն

¹ Այսպէս օր. (եր. 10) «Զարար իւրով Աղապարշկա-
զըր թագաւորսրդոյց Հայաստանս արխաշէր, Հանմ. Մ. խոր.
Բ. աւ. Կ. Կ. իրեղիւրաւս օրինակներէն՝ Ապա Բրտանա-
ստան ինն նախադասութիւնս նոյնպէս բազան է խորհու-
ցոյց որ այս առիթով (Բ. Ժ) իշխւմ է նոր, (Ինչո՞ւ) Մար-
տիրոս արքայորդու աղբիւրներ. այս աղբիւրներէց քին, մե-
կաթիմուք, Բնանուք է, օրից Մ. խորհմացին իւր ասե-
լանս ապաւութեամբ օգտուէ և :

ըստ կարգի հետեւանայ ի թագաւորութիւն: Բայց գրեմ կարճ ի կարճոյ որ ինչ մեզ անկ է, եւ զաւելորդն թողում:

Խորենացին այս տեսակետով առաջնորդուած, պէտք է վճռէր այս, գեռ Մանուէրի աշխատութեան մէջ արծարծուած հարցն այնպէս, որ կարելոյն չտի կարողանար վերականգնել միայն մի, իւր բոլոր ուշադրութիւնը գրաւող ազգատոհմի յաջորդականութիւնը: Մանուէրի ժամանակագրական աղէտակեր խորենացու մօտ միանգամայն մի տոհմի անընդհատ ինքնող ազգաբանական ծառի ձեւ է ընդունում:

Միւս կողմից մենք, ի հարկէ չենք կարող մեղադրել Մանուէրին, որ ցանկացել է Հայաստանի որոշեալ ժամանակամիջոցի թագաւորների աղէտակեր կազմել, թէեւ նրան միշտ պարզ եւ կամ բոլորովին յայտնի չէ եղել յաջորդի եւ նախորդի միջեւ եղած արեւնակցական կապը: Բայց ինչ էլ որ ինքեւր, չէր կարելի այսպիսի գլխաւոր յաջորդական կարգից դուրս ձգել ոչ առաջին երկու անունները, որոնք ամբողջ ցուցակի տոհմական միտքն են բացատրում եւ ոչ երրորդ կարգի անունները, որի վերջին անդամը շատ մօտ եւ նոյն իսկ ժամանակակից է աղէտակեր կազմողին: Այս երկու խումբը այն միայնու մասն են կարծում, որին, ինչպէս ասել ենք, վերաբերում է նախապէս յօրինուած գրական աւանդութիւնը:

Առանձնացնելով միջին խումբը (Բ) Մ. Խորենացուց ներմուծուած Արտաշէսի հետ ի միասին, որ Մանուէրի մօտ միայնակ է մնացել եւ ոչ մինի հետ արեւնակցական կապով է կապուած, մենք կը բանալք վերլուծեալ քայլն հաստատող փաստերը:

Նախ մնացած թագաւորների թիւը հաւասար է ըստ Մանուէրի այդ միեւնոյն ժամանակամիջոցում Պարսկաստանում թագաւորող Արշակունիների եւ Սասանեանների թուին: Այսպիսի համադրութիւնը Հայ մատենագիրները ճշմարտութեան մարմնացումն էին ընդունում: Մ. Խորենացին Հայ նահապետների կամ թագաւորների հին նտադրանի նահապետների կամ օտարերկրեայ թագաւորների հետ համագիպումը ճշմարտութեան ապացոյց էր համարում: Եւ այս կատարելիս, նա շատ անգամ բացազանչում է «Իսկ դու, ով ուշիմ ընթերցատէր, հայեաց աստանոր ընդ հաստատութիւն կարգի երից ազգացդ մինչեւ ցԱրբաշամ, ցՆինոս եւ ցԱրամ եւ զարմացիր (՝) (Ա. Ե.)»: Եւ ըստ երեւութիւն, սկզբնական խմբագրու-

թեան մէջ եւս այսպիսի զարմանալի կերպով է կազմուել Հայ Արշակունիների ցանկը, Մանուէրն յայտնի սրանք ժամանակակից Պարսից թագաւորների թուի համեմատ:

Յետք Մ. Խորենացու պատմութեան մէջ կարգում ենք, որ Երուանդ միայն մօրից Արշակունի լինելով՝ խլում է ինքանութիւնը եւ քսան տարի թագաւորում Հայաստանում եւ որպէս սրան լրացումն՝ Մանուէրի աղէտակեր երկրորդ խմբի բաժանմունքի մէջ ծանօթանում ենք Երուանդի ամբողջ սերնդի կամ աւելի շիրջ, նրա եղբը սերնդի ազգաբանութեանը: Մ. Խորենացին այս, ըստ Մանուէրի անհարազատ կարգի չորս անդամների, Արտաշէսի (Արտաւան) Արտաշէսին, Տիրանին եւ Տիգրանին պահում է, եւ վերագրում առաջին գլխաւոր կարգին, դարձնում է օրինաւոր անդամներ, իսկ միւս երկուսը բաց է թողնում, որով եւ Հայ Արշակունիների գլխաւոր շարքն ստանում է տասնեւին անդամ: Թիւը վաղուց արդէն լրացած է: Հայոց շարքը հաւասարակշռում են Պարսից տասնեւին թագաւորներ, հինգ Սասանեաններ եւ բոլոր Պարթեւ Արշակունիներ. այս վերջիններին շարքում երկու կամ երեքը Խորենացին հակառակ Մանուէրին նոր է մուծել: Մի փոքրիկ աւելացումն սպառնում է բոլորովին քանդել այս փայփայած, պայմանական ձեւով կազմուած ազգաբանութիւնը. եւ բացի սրանից, որպէս զի ժամանակակից անդամների թիւը երկու ցուցակում միմեանք ծածկին, գոնէ մօտաւորապէս, պէտք է եղել Հայոց առաջին թագաւորի որդիութիւնից, ինչպէս նշանակուած է Մանուէրի մօտ, Պարթեւաց թագաւորի եղբայր դարձնել:

(Ըբռնութիւն)

ԹԱՐԳՄ. Ե. ԱՄԱՅԵԱՆ:



Ա Ձ Գ Ա Գ Ր Ա Վ Ա Ն

Կերպի Մարտիրոսի զին ինքն յերգի:

Նայաբազար աղքատ է հին ձեռագիրներու կողմանէ: Բայց շատ հարուստ է Գրան-սիրուանիով մեկալ ազգային քաղաքաց համեմատութեամբ — ուր որ հին ձեռագրաց եւ ոչ հետքը կայ — եւ բաւական հարուստ ազգային ուրիշ մատենադարաններուն հետ համեմատելով: